ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն, շ.1, Հեռ. 060656505 , info@mecamor.am

N **06588**
22 դեկտեմբեր 2023թ.

«ԱՐՄ ՄԵԳԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Ա. ՓԻՆԱՋՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Փինաչյան
Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար 2022 թվականի օգոստոսի 29-ին հայտարարված տանիքների նորոգման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/46 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել Ձեր կազմակերպությունը՝ «Արմ Մեգա Գրուպ» ՍՊԸ-ն և 10.10.2022թ-ին Ձեզ հետ կնքվել է ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/46-1 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում, հետագայում՝ ֆինանսական միջոցների հատկացմամբ պայմանավորված՝ 31.10.2022թ-ին կնքվել է նաև ֆինանսական միջոցների հատկացման և վճարման ու գնման ժամանակացույցների հաստատման համաձայնագիր:
Պայմանագրի շրջանակում «Արմ Մեգա Գրուպ» ՍՊԸ-ն կատարել է Պայմանագրով սահմանված աշխատանքները և սահմանված կարգով՝ Մեծամորի համայնքապետարանի կողմից իրականացվել են համապատասխան վճարումները, մասնավորապես՝ Պայմանագրի շրջանակներում դուրս գրված վերջին հաշիվ-ապրանքագիրը և վճարումը եղել են 2022 թվականի դեկտեմբերի 28-ին:
Հայտնում ենք, որ Պայմանագրի 3.4.9 կետով սահմանված է, որ «Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր՝ եթե նախագծանախահաշվային փաստաթղթերով այլ ժամկետ սահմանված չէ: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները»:
Նշյալով պայմանավորված, Մեծամորի համայնքապետարանը, Ձեր կողմից կատարված աշխատանքներում նկատելով թերություններ, մասնավորապես՝ այն հանգամանքը, որ Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս 8Բ2 շենքի հարթ տանիքի տոլերը

պոկվում են, իսկ Պայմանագիրը գտնվում է երաշխիքային ժամկետի մեջ, ս.թ. հոկտեմբերի 3-ին N 04911 գրությամբ դիմել է Ձեզ՝ առաջարկելով շտկել մատնանշված թերությունները, սակայն՝ Ձեր կողմից առ այսօր արձագանք չի եղել, որևէ ձևով չեք փորձել կապ հաստատել Մեծամորի համայնքապետարանի հետ և չեք շտկել ի հայտ եկած թերությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ Պայմանագրի 3.4.9 կետով սահմանված է, որ «Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր՝ եթե նախագծա-նախահաշվային փաստաթղթերով այլ ժամկետ սահմանված չէ: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները», իսկ Ձեր կողմից չի ապահովվում նշյալ կետով սահմանված պահանջի իրականացումը, տեղեկացնում ենք, որ Մեծամորի համայնքապետարանը 29.11.2023թ-ից կնքված Պայմանագիրը միակողմանի լուծել է:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 10 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. դեկտեմբերի 9-ը ներառյալ, ապահովել Պայմանագրի շրջանակներում Ձեր կողմից ներկայացված տուժանքներով սահմանված, մասնավորապես՝ որակավորման ապահովման մասով՝ 1,488,830.00 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունութ հազար ութ հարյուր երեսուն) ՀՀ դրամի չափով, իսկ պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 992,560.00 (ինը հարյուր իննսուն երկու հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով, գումարների փոխանցումը Մեծամորի համայնքապետարանի ՀՀ ՖՆ գործառնական վարչությունում բացված 900332001503 հաշվեհամարին փոխանցելու միջոցով:Տեղեկացնում ենք նաև, որ վերոնշյալի կապակցությամբ Մեծամորի համայնքապետարանը դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում Մեծամորի համայնքապետարանը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներըկիրառելունպատակով:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ՝ Ն. Հակոբյան
+37498393676